ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/64

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև բողոքներ քննող անձը)՝ քննելով «Թալինի ավտոտրանսպորտային և ճանապարհների» ՓԲԸ-ի 27.04.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Թալինի ավտոտրանսպորտային և ճանապարհների» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Թալինի ավտոտրանսպորտային և ճանապարհների» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 27.04.2018թ. ներկայացրել է բողոք, որով բողոքարկել է «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/3Շ» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 04.04.2018թ. կայացրած որոշումը՝ Ընկերության բանկային երաշխիքի վավերականության ժամկետի անհամապատասխանության վերաբերյալ:

Հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը և 32-րդ հոդվածը, ինչպես նաև «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի 06.04.2018թ. N 2413-02 նամակով լրացուցիչ հավաստիացումը բանկային երաշխիքի վավերականության ժամկետի (հայտը

ներկայացնելու օրվանից 90 աշխատանքային օր) վերաբերյալ, Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/3Շ» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին փոփոխել 04.04.2018թ. կայացրած որոշումը և ընդունել «Թալինի ավտոտրանսպորտային և ճամնապարհների» ՓԲԸ-ին «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/3Շ» ծածկագրով բաց մրցույթի հաղթող մասնակից ճանաչելու վերաբերյալ համապատասխան որոշում:

Բողոքի քննության նպատակով բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Արմեն Մկրտչյանը:

2. <u>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Թալինի ավտոտրանսպորտային և ճամնապարհների» ՓԲԸ-ի կողմից 27.04.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 04.05.2018թ. թիվ 91E3-41C2-ED6E գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/3Շ ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.4 ենթակետով սահմանված պահանջների համաձայն հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

«Թալինի ավտոտրանսպորտային և ճանապարհների» ՓԲԸ-ի կողմից, որպես հայտի ապահովում ներկայացվել է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից 2018թ. մարտի 27-ին տրված N 2127-02 բանկային երաշխիքը, որում նշված է, որ երաշխիքը գործում է 27.03.2018թ.-ից մինչև 03.08.2018թ., իսկ մասնակցի հայտը ներկայացվել է 2018թ. մարտի 28-ին: Գնահատող հանձնաժողովի կողմից ստուգվել և 2018թ. ապրիլի 4-ի արձանագրությամբ արձանագրվել է, որ բանկային երաշխիքի վավերականության ժամկետը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես, երաշխիքի ժամկետը պետք է վավեր լիներ մինչև 2018թ.-ի օգոստոսի 7-ը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Գուրգեն Թադևոսյանը և Սամվել Թամրազյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/64 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Թալինի ավտոտրանսպորտային և ճանապարհների» ՓԲԸ-ի 23.03.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/3Շ» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/3Շ» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 04.04.2018թ. հայտերի բացման նիստի N 3 և 11.04.2018թ. նիստի N 4 արձանագրությունները, «Թալինի ավտոտրանսպորտային և ճանապարհների» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի պատճենը, Պատվիրատուի 04.05.2018թ. թիվ 91E3-41C2-ED6E գրությամբ հայտնած դիրքորոշումը.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար «Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 291+940 – կմ 294+000 հատվածի հիմնանորոգման, Հ-13, Վաղարշապատ - Մասիս- Մ-2 հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 16+000 – կմ 18+000 2 կմ երկարությամբ հատվածի ասֆալտապատման, Ա/ճ Տ-1-31, Մ-1-Շամիրամ հիմնանորոգման, Ա/ճ Տ-1-23, Հ-21–Բերքառատ հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ««ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/3Շ» ծածկագրով բաց մրցույթի 3-րդ չափաբաժնի մասով (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Թալինի ավտոտրանսպորտային և ճանապարհների» ՓԲԸ-ն:

«Թալինի ավտոտրանսպորտային և ճանապարհների» ՓԲԸ-ն մասնակցության հայտի ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, որի գործողության ժամկետը սահմանված է 27.03.2018թ.-ից մինչև 03.08.2018թ. ներառյալ:

Հանձնաժողովի 04.04.2018թ. ժամը 16:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 1-ին կետի բ) ենթակետի համաձայն՝ «Թալինի ավտոտրանսպորտային և ճանապարհների» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքի վավերականության ժամկետը չի համապատասխանում հրավերի 7-րդ կետի 7.4 ենթակետով սահմանված պահանջներին, այն է՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Բանկային երաշխիքի վավերականության ժամկետը պակաս է 90 աշխատանքային օրից:

Նույն արձանագրության 2-րդ կետի բ) ենթակետով հանձնաժողովը որոշել է «Թալինի ավտոտրանսպորտային և ճանապարհների» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար:

«Թալինի ավտոտրանսպորտային և ճանապարհների» ՓԲԸ-ն բողոքարկել է «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/3Շ» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 04.04.2018թ. կայացրած որոշումը՝ Ընկերության բանկային երաշխիքի վավերականության ժամկետի անհամապատասխանության վերաբերյալ: Ընկերությունը Բողոքներ քննող անձին է ներկայացրել նաև «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից 06.04.2018թ. թիվ 24/3-02 գրությամբ տրված հավաստիացումն առ այն, որ «Թալինի ավտոտրանսպորտային և ճանապարհների» ՓԲԸ-ին տրամադրված թիվ 2127-02 բանկային երաշխիքը, որը տրամադրվել էր «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/3Շ» ծածկագրով մրցույթին մասնակցելու նպատակով, վավեր է հայտի ներկայացման օրվանից 90 աշխատանքային օր:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները և իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 383-րդ հոդվածի համաձայն՝ երաշխիք տված անձը (բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը) այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/3Շ» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի՝

- 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին: 1-4 չափաբաժինների համար հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

- 7.4 ենթակետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

- 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Թալինի ավտոտրանսպորտային և ճանապարհների» ՓԲԸ-ն որպես հայտի ապահովում ներկայացրել է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից 2018թ. մարտի 27-ին տրված բանկային երաշխիքը, որում նշված է, որ երաշխիքը գործում է 27.03.2018թ.-ից մինչև 03.08.2018թ., իսկ մասնակցի հայտը ներկայացվել է 2018թ. մարտի 28-ին, այսինքն, նշված երաշխիքի գործողության

ժամկետը չի պարունակել Հրավերով սահմանված 90 աշխատանքային օր ժամանակահատվածը, որի գործողության վերջնաժամկետը, հայտը 28.03.2018թ. ներկայացված լինելու պայմաններում՝ 07.08.2018թ. է:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը «Թալինի ավտոտրանսպորտային և ճանապարհների» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելով՝ գործել է իրավաչափ, քանի որ երաշխիքում առկա է եղել անհամապատասխանություն Հրավերով սահմանված պահանջին, իսկ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե մասնակցի հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա այն շտկման ենթակա չէ:

Ինչ վերաբերում է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից 06.04.2018թ. տրված լրացուցիչ հավաստիացումն առ այն, որ «Թալինի ավտոտրանսպորտային և ճանապարհների» ՓԲԸ-ին տրամադրված բանկային երաշխիքը վավեր է հայտի ներկայացման օրվանից 90 աշխատանքնային օր, անհիմն է, քանի որ նույն երաշխիքում հստակ սահմանված է երաշխիքի գործողության ժամկետը, որը չի կազմում 90 աշխատանքային օր:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Թալինի ավտոտրանսպորտային և ճանապարհների» ՓԲԸ-ի 27.04.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**